ՉԱՐԻՔ

Posted on June 18, 2021 by Keghart



Category: Opinions

Ռուբէն Յովակիմեան, Սեն Ռաֆայել, 17 Հունիս 21

« *Երբ ընտրում ենք “Չարիքի նուազագոյն”ը,*
այն քաղաքական մեծ սխալ փաստարկ է,
քանզի այն նուազագոյն է, բայց չարիք է»:
Հաննահ Արենդտ

Աւելի քան ձանձրալի է, նոյնիսկ նողկալի առաջիկայ ընտրութիւնների հետ կապուած քարոզարշաւի գաղափարական մակարդակը, որ ըստ սկզբունքի անգոյ կամ խղճուկ կարելի է համարել, տարրական փոխադարձ յարգանքը բառացիօրէն բացակայ է ասուլիսների եւ ելոյթների ընթացքին, կեղծ եւ սուտ փաստարկումն ու վկայումը դարձել են ապրելակերպ, ստախօսութիւնը եւ մօտակայ անցեալի յանցագործութիւնների ուրացումը ոչ ոքի չի զարմացնում, իսկ մամուլի որոշ հատուածի արդի կաղ եւ անբարոյ կեցուածքը դժուար է գնահատել:

«Ազդակ»ին տուած հարցազրոյցի ընթացքին Յակոբ Տէր Խաչատուրեան հաստատեց. *«Պէտք է ձերբազատիլ այս իշխանութենէն, որուն պատճառով հայութիւնը ապրեցաւ անկախ Հայաստանի նորագոյն պատմութեան ամէնէն աղէտալի էջերը», Յունիս 15-21:* Ըստ էութեան ոչինչ չկայ պախարակելի այս յայտարարութեան մէջ, քանի որ ամէն մարդ ազատ է իր կարծիքը ունենալ՝ մանաւանդ յեղափոխական առաջադէմ կուսակցութեան ղեկավարը, միայն թէ այդ կարծիքը կաղում է, երբ մեր յարգարժան գաղափարախօսը ցանկանում է եղած իշխանութիւնից ձերբազատելու պարագային այն փոխարինել մեր նորագոյն պատմութեան ամենանողկալի յանցանքների հեղինակի ձեւաւորած կառավարութեամբ եւ աչառու է, որ յարգարժան խմբագրութեան եւ վերոյիշեալ կոչի հեղինակի համար հոկտեմբեր 27 չի եղել եւ խորհրդարանի նիստի ընթացքին պատգամաւոր չի սպանուել, իսկ եթէ եղել է, ապա «չար ոգի»ների ձեռքով եւ իրենց գործակից ղեկավար Քոչարեանը որեւէ կապ չունի դէպքի հետ, աւելին՝ նոյն խմբին յարողների համար մարտի մէկը զուտ ստախօսութիւն է, իսկ բանակին յատկացուած գումար յափշտակելը, երբ այն հոսել է որոշ ղեկավարների գրպանը ուռճացնելու, դա եւս այնքան էլ պախարակելի չէ: Ինչ ասել համատարած թալանի մասին, որ յիշատակելը անգամ ձանձրալի է դարձել, քանի որ բացայայտումները որեւէ լուծման չեն յանգել, իսկ քարոզարշաւի ընթացքին ոչ մէկ թեկնածու է յիշում եւ ներկայացնում դատական համակարգի եւ Սահմանադրական դատարանի մինչ ծուծը փտածութիւնը:

Որքան որ տարօրինակ գնահատուի, գտնւում ենք մի փաստի առջեւ՝ երբ քսանից աւելի «հայրենաշէն փրկարարներ»ի դիմաց կայ մէկ խանգարող «դաւաճան» գործող վարչապետ, որին ամէն գնով պէտք է յօշոտել, քանզի նա է մեր երկրի բոլոր անյաջող երեւոյթների պատճառն ու հեղինակը եւ եթէ նա հեռացուի, ապա այդ թաքնուած հերոսները մի քանի օրում Շուշին եւ Հադրութը ետ կը բերեն՝ առանց փամփուշտի:

Ստոր եւ պիղծ մտայնութիւնը անասելի է, քանի որ մեր երկրի քաղաքական դաշտում բացակայում է քաղաքակիրթ բանականութիւնը, իսկ առաջին շարքում են քայլում չկայացածները, որ արդէն սկսել են ընտրակաշառքի իրենց լայնատարած սովորական գործը:

Շատերը չհասկացան, որ երկրի ղեկավարութիւնը (նախագահ թէ վարչապետ) սառնաշաքար չէ, որ նուիրում են թեկնածուներին հրճուելու համար, այլ ծանր մի բեռ, որ ժողովուրդը շնորհում եւ վստահում է այն անձին, ով կարող է լաւագոյնս մարմնացնել երկրի ճակատագիրը: Այն արկածախնդրութիւն չէ, այլ պարտականութիւնների անթերի գիտակցութիւն՝ հասարակութեան բարձր մակարդակի առկայութեամբ: Ցաւօք, Փաշինեանը լիովին չգնահատեց իր պաշտօնի ծանրութիւնը՝ անելով որոշ մեծ կամ փոքր սայթաքումներ, որ յարիր չեն գրաւած դիրքին՝ պահպանելով մի տեսակ գաւառականութիւն, որ բազում հակառակորդները չեն զլանում ձայնել:

Պիտի չփորձեմ ընտրութեան արդիւնքները գուշակելու մարգարէութիւն անել՝ կ'ապրենք, կը տեսնենք, միայն թէ շատ դժուար ճանապարհ կայ անցնելիք, երբ որոշիչ տարր է հանդիսանում ոչ թէ մարդկային բանականութիւնը կամ իմացականութիւնն ու առողջ դատողութիւնը, այլ առաջ քաշուած հռետորաբանութիւնը, եւ ողբալի է ասել մեր հայրենաբնակների մի մասի քաղաքացիական պարտքի գիտակցութեան բացակայութիւնը, երբ ինչ որ գումարի կամ մի քանի պատառ «պիձձա»յի կամ ինչ որ նիւթական շահի դիմաց կարողանում են ծախել իրենց ընտրական իրաւունքը: Սա է մեր երկիրն ու վերջ:

Հակաքարոզչութիւն անելու տրամադիր չեմ, բայց չեմ կարող հարց չտալ, թէ ի՞նչ հրաշագործութիւնների է տիրապետում Քոչարեանը, որ չի գործարկել իր անցեալ տասնամեայ իշխանութեան ընթացքին, որ այսօր հանի տուփից եւ փրկի երկիրը, երբ երկիրը իրենից փրկուելու կարիքն ու անհրաժեշտութիւնը ունի: Նոյնը կարելի է ասել միւս բարձր գոռացողների՝ սերժի, դոդի եւ այլոց մասին: Նրանց միակ նպատակը փառասիրութիւնը յագեցնելն է մի փոքր հարստութիւն աւելացնելու միտումով, քանզի մեր հասարակութիւնը մոռացել է սերժիկի եղբայրների տիրած թալանին եւ միւսի միլիոն դոլարի հարսանիքների մասին:

Սթափուելու զանգը վաղուց է հնչել, եւ յուսանք, որ մեր հասարակութիւնը միեւնոյն սխալները չի կրկնի բանտի խուցը դնելու փոխարէն՝ ոմանց պետական աթոռ չի տայ:

Մեզ մնում է համբերութեամբ սպասել չարիքից հեռու:

Աւելի քան հինգ տասնամեակ այս թերթը ընթերցելով միշտ հայրենատենչ գաղափարներ եմ տեսել, բայց անհասկանալի է ինձ համար այսօրուայ դիրքորոշումը:

There are no comments yet.